ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՑԻԱ «ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՔՈՒՅՐԵՐ» ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

13.12.2016 12:35

Հարգելի փաստաբաններ,

Շարունակելով մեր ավանդույթը՝ ցանկանում ենք 2016թ. դեկտեմբերի 22-ին ժամը 17:00-ին այցելել Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն, որտեղ խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդություն ունեցող երեխաներ, որոնցից ծնողները հրաժարվել են:

Մանկատան երեխաներին օգնություն տրամադրելու, ինչպես նաև նրանց անձամբ այցելելու ցանկություն ունեցող փաստաբանները կարող են info@advocates.am նամակ ուղարկել կամ անհրաժեշտ իրը ստացականով հանձնել փաստաբանների պալատի ընդունարանի պատասխանատուին:

Մանկատան երեխաներին անհրաժեշտ են նաև հետևյալ իրերը՝
- մանկական մանեժ (կարող է լինել օգտագործված)
- Similac 2 կաթնային խառնուրդ
- BEBI շիլաներ (каша)
- Huggies, Libero, Puffies տակդիրներ (ցանկացած չափերի)
- թաց անձեռոցիկներ
- շոկոլադե կոնֆետներ Kinder:

Մանկատունը գտնվում է Նորք-Մարաշ վարչական շրջանում:
Ալերգիկ երևույթները բացառելու նպատակով փափուկ խաղալիքներ չեն ընդունում:

Փաստաբանների պալատից կամավորների խումբը մեկնելու է 2016թ. դեկտեմբերի 22-ին ժամը 16:45-ին: Եթե ցանկանում եք ներկա գտնվել, ապա խնդրում ենք նախապես տեղեկացնել:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի
աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })